ԳԼՈԲԱԼ ԱՐԺԵՔԻ ՇՂԹԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

N4, 2020

Հիմնաբառեր. *գլոբալ արժեքի շղթաների մասնակցության համաթիվ, ուղղակի կապեր, հետադարձ կապեր, Հայաստան*

Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրտսեր հետազոտող, իսկ 2018 թ.-ից առայսօր՝ որպես փորձագետ: Հեղինակ և համահեղինակ է մի շարք գիտական աշխատանքների:

https://orcid.org/0000-0001-7669-8626

Գլոբալ արժեքի շղթաները միջազգային տնտեսական համագործակցության համեմատաբար նոր ձև են, որ ծագել են աշխատանքի միջազգային բաժանման խորացման արդյունքում՝ պայմանավորված արտադրության արդյունավետության մակարդակի բարձրացմամբ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ զարգացած երկրներն ավելի լավ են ինտեգրված գլոբալ արժեքի շղթաներին: Առաջնային ապրանքներ արտահանող երկրներն ունեն ուղղակի կապերի մեծ մասնաբաժին: Այս երկրներից արտահանվող ապրանքներն օգտագործվում են այլ երկրների արտադրության մեջ և արտահանվում երրորդ երկրներ: Լինելով առաջնային ապրանքներ արտահանող երկիր՝ Հայաստանին նույնպես բնորոշ է ուղղակի կապերի մեծ մասնաբաժինը:

Դեռևս 2020 թ. հունվարին Չինաստանը, փորձելով կանգնեցնել կորոնավիրուսի համավարակը, Հուբեյ նահանգում անցավ խիստ սահմանափակումների ռեժիմի: Վերջինս դեղագործական արտադրանքի, ավտոմեքենաների և էլեկտրոնիկայի բաղադրիչների արտադրության խոշորագույն կենտրոն է: Չինաստանի՝ աշխարհի կենսական տնտեսական կենտրոնի մեկուսացումն առաջացրեց ոչ միայն համաշխարհային առևտրային հոսքերի, այլև արտադրական գործընթացների ընդհատումներ շատ երկրներում: Օրինակ՝ փետրվարին Hyundai Motor ընկերությունը հայտարարեց, որ ստիպված է դադարեցնել արտադրությունը Հարավային Կորեայի գործարանում, քանի որ չի կարողանում ստանալ անհրաժեշտ դետալներ (մանրակներ), որոնք

արտադրվում են Չինաստանում[1]:

Ժամանակակից աշխարհում միջազգային տնտեսական համագործակցությունը դուրս է գալիս ավանդական առևտրային կապերի սահմաններից: XXI դարի սկզբին միջազգային առևտուրը բնորոշվում է կառուցվածքային փոփոխություններով, երբ երկրները մասնագիտանում են ոչ թե առանձին ապրանքների արտադրության, այլ որոշակի արտադրական գործընթացների իրականացման մեջ: Այսպիսով՝ մեկ ապրանքի արտադրությունն ընդգրկում է մի քանի երկրներում իրականացվող գործընթացներ: Օրինակ՝ Iphone-ը նախագծվում է Միացյալ Նահանգներում, սակայն դրա տարբեր դետալներ պատրաստվում են 43 երկրների մատակարարների կողմից՝ չափազանց բարդ մատակարարման շղթաների միջոցով[2]:

Գլոբալ արժեքի շղթաները (ԳԱՇ) միջազգային տնտեսական համագործակցության համեմատաբար նոր ձև են, որ ծագել են աշխատանքի միջազգային բաժանման խորացման արդյունքում: Դրանք իրենցից ներկայացնում են արժեքի ստեղծման գործընթաց, որի դեպքում որոշ գործընթացներ (նախագծում, արտադրություն, մարքեթինգ, բաշխում) տեղաբաշխվում են առնվազն երկու երկրների ընկերությունների միջև: Գլոբալ արժեքի շղթաներն ակտիվորեն սկսել են ձևավորվել 1970-ական թվականներին՝ պայմանավորված մի շարք գործոններով: Էներգակիրների գների աճը, զարգացող երկրների տնտեսական բարեփոխումները և այդ երկրներում էժան աշխատուժի առկայությունը խթան են հանդիսացել, որպեսզի վերազգային կորպորացիաներն արտադրական գործընթացների առավել ռեսուրսատար և աշխատատար մասը տեղափոխեն զարգացող երկրներ[3]:

Զարգացած երկրներին գլոբալ արժեքի շղթաները հնարավորություն են տալիս առավել արդյունավետ կերպով կազմակերպելու արտադրությունը՝ հումքատար և աշխատատար գործընթացները տեղափոխելով համապատասխան ռեսուրսներով հարուստ երկրներ: Զարգացող երկրների համար դրանք արագ ուղի են դեպի արդյունաբերականացում: Բացի այդ, միջազգայնորեն տարանջատված արտադրությունը զարգացող տնտեսություններին թույլ է տալիս միանալ գոյություն ունեցող մատակարարման շղթաներին՝ դրանք ստեղծելու փոխարեն: ԱՄՀ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գլոբալ արժեքի շղթաներին մասնակցությունից ավելի շատ օգուտներ են ստանում բարձր, քան ցածր եկամուտ ունեցող երկրները[4]:

Զարգացող երկրները համեմատաբար ավելի թույլ են ինտեգրված գլոբալ արժեքի շղթաներին: Զարգացող երկրների՝ գլոբալ արժեքի շղթաներին մասնակցության հիմնական խոչընդոտները կապված են ինստիտուցիոնալ գործոնների (պայմանագրերի կիրարկման հնարավորություն, գործարար միջավայրի կայունություն, սեփականության իրավունքի պաշտպանություն) և ենթակառուցվածքների թերզարգացվածության հետ[5]:

Երկրների ինտեգրվածությունը գլոբալ արժեքի շղթաներին գնահատվում է ԳԱՇ մասնակցության համաթվի միջոցով, որի հաշվարկման համար համախառն արտահանումը բաժանվում է երկու բաղադրիչի՝ արտաքին ավելացված արժեք (FVA-foreign value added) և ներքին ավելացված արժեք (DVA-domestic value added): Արտաքին ավելացված արժեքն օտարերկրյա ավելացված արժեքի, այսինքն՝ ներմուծման մասնաբաժինն է երկրի համախառն արտահանման մեջ (հետադարձ կապեր): Ներքին ավելացված արժեքի մեջ առանձնացվում է՝ ա) վերջնական ապրանքների արտահանումը, բ) միջանկյալ արտադրանքի արտահանումը, որը կլանվում է արտահան-

[1] China Coronavirus Lockdown Crippling Global Supply Chain, February 06, 2020, https://www.voanews.com/science-health/coronavirus-outbreak/china-coronavirus-lockdown-crippling-global-supply-chain

[2] Post-COVID-19 Reconfiguration of the Global Value Chains and China, Jun 10, 2020, http://voxchina.org/show-3-182.html

[3] Рогатных Е., Глобальные цепочки добавленной стоимости и их влияние наразвитие национальной экономики, 2016, https://mirec.mgimo.ru/upload/ckeditor/files/mirec-2016-4-rogatnykh.pdf

[4] Ignatenko A., Raei F., Mircheva B., Global Value Chains: What are the Benefits and Why Do Countries Participate?, IMF working paper, 2019.

[5] Babych Y., Keshelava D., Mzhavanadze G., It's Not Who You Trade With – It's Who You Produce With: Measuring Georgia's Integration into Global and Regional Value Chains, 17 March 2020, https://iset-pi.ge/index.php/en/iset-economist-blog-2/entry/it-s-not-who-you-trade-with-it-s-who-you-produce-with-measuring-georgia-s-integration-into-global-and-regional-value-chains



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Երկրների ներգրավվածությունը ԳԱՇ-ում, 2018 թ.

Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները Eora ԳԱՇ տվյալների բազայի հիման վրա

ման երկրում, գ) միջանկյալ արտադրանքի արտահանումը, որը հետագայում վերադարձվում է երկիր, դ) անուղղակի ավելացված արժեքը (DVX - indirect value-added exports) տեղական արտադրանքն է, որն արտահանվում է որպես միջանկյալ արտադրանք և հետագայում արտահանվում երրորդ երկիր (ուղղակի կապեր): Գլոբալ արժեքի շղթաներին մասնակցության համաթիվը սահմանվում է որպես արտահանման մեջ հետադարձ և ուղղակի կապերի մասնաբաժին:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, զարգացած երկրներն ավելի լավ են ինտեգրված գլոբալ արժեքի շղթաներին: Ընդ որում, ԳԱՇ մասնակցության համաթվով առաջատար դիրքեր են զբաղեցնում փոքր բաց տնտեսություն ունեցողները՝ Լյուքսեմբուրգ, Սլովակիա, Բելգիա, Նիդեռլանդներ, Սինգապուր և այլն: Վերջիններիս բնորոշ են ավելի մեծ հետադարձ կապերը՝ ի տարբերություն մեծ տնտեսությունների (ինչպիսիք են ԱՄՆ-ը, Գերմանիան), որոնց հետադարձ և ուղղակի կապերի մասնաբաժինը գրեթե հավասար է: Օրինակ՝ Սինգապուրի ԳԱՇ մասնակցության համաթիվը 75.5% է, ինչը նշանակում է, որ երկրի համախառն արտահանման 75.5%-ը կամ այլ երկրներից ներմուծված ապրանքներն են, կամ երկրի ներսում արտադրված միջանկյալ ապրանքները, որոնք հետագայում առևտրային գործընկերներն արտահանում են այլ երկրներ: Միաժամանակ, այլ երկրներից ներմուծված ապրանքների մասնաբաժինը համախառն արտահանման մեջ (հետադարձ կապեր) 61.9% է, իսկ ուղղակի կապերը՝ 13.6%:

Առաջնային ապրանքներ արտահանողները, օրինակ՝ Ռուսաստանը և Միջին Արևելքի երկրները, ունեն ուղղակի կապերի մեծ մասնաբաժին, ինչը նշանակում է, որ այս երկրներից արտահանվող ապրանքներն օգտագործվում են այլ երկրների արտադրության մեջ և արտահանվում երրորդ երկրներ: Օրինակ՝ Քուվեյթի գլոբալ արժեքի շղթաներում մասնակցության համաթիվը 66.7% է, որից հետադարձ կապերի մասնաբաժինը՝ 3.3%, իսկ ուղղակի կապերինը՝ 63.4%: Ռուսաստանի գլոբալ արժեքի շղթաներում մասնակցության համաթիվը 59.1% է, ընդ որում, ներմուծման մասնաբաժինը համախառն արտահանման մեջկազմում է 9.1%, այն դեպքում, երբ ուղղակի կապերի մասնաբաժինը 50% է:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Հայաստանի մասնակցությունը գլոբալ արժեքի շղթաներին, 2008-2018 թթ.

Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները Eora ԳԱՇ տվյալների բազայի հիման վրա

Հայաստանի՝ գլոբալ արժեքների շղթայի մասնակցության համաթիվը 2018 թ. 46,8% էր: Լինելով առաջնային ապրանքներ արտահանող երկիր՝ վերջինիս նույնպես բնորոշ է ուղղակի կապերի մեծ մասնաբաժինը (27.8%):

Վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանի ԳԱՇ համաթիվն անշեղորեն նվազել է՝ գրեթե 60%-ից հասելով 46.8%-ի: Անկումը պայմանավորված է եղել ուղղակի կապերի նվազմամբ: Օտարերկրյա ավելացված արժեքի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ մնում է կայուն ցածր:

Արժեքի շղթաներում երկրների ներգրավվածության գնահատումը թույլ է տալիս հասկանալ, թե որքանով են փոխկապված առանձին երկրների տնտեսություններն այլ երկրների և ամբողջությամբ համաշխարհային տնտեսական համակարգի հետ: Այս առումով, մենք դիտարկել ենք նաև Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների ներգրավվածության աստիճանը Միության արժեքի շղթաներում:

Աղյուսակ 1-ից պարզ է դառնում, որ ԵԱՏՄ երկրների ինտեգրման աստիճանը Միության արտադրական գործընթացներում բավական ցածր է: Ինտեգրման ամենաբարձր աստիճանն ունի Բելառուսը (34.9%), ամենացածրը՝ Ռուսաստանը (2%): Սա նշանակում է, որ, թեև առևտրի մեծ ծավալներին, ԵԱՏՄ երկրների միջև տնտեսական փոխկապվածությունը ցածր է, և փոխադարձ առևտրի ծանրակշիռ մասը բաժին է ընկնում վերջնական սպառման արտադրանքին:

Հայաստանի ներգրավածությունը ԵԱՏՄ արժեքի շղթաներում բավական ցածր է: 2018 թ. ՀՀ-ից ԵԱՏՄ արտահանման ընդամենը 5.7% են կազմել ներմուծված ապ-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ԵԱՏՄ երկրների մասնակցությունը գլոբալ և ԵԱՏՄ արժեքի շղթաներում

	2014		2018	
	ԵԱՏՄ մասն. համաթիվ, (%)	ԳԱՇ մասն. համաթիվ (%)	ԵԱՏՄ մասն. համաթիվ, (%)	ԳԱՇ մասն. համաթիվ, (%)
Հայաստան	8,7	55,8	5,7	46,8
Բելառուս*	20,2	-	34,9	-
Ղազախստան	16,4	54,8	9,5	52,7
Ղրղզստան	18,3	48,6	10,8	44,1
Ռուսաստան	2,2	61,3	2,00	59,1

Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները Eora ԳԱՇ տվյալների բազայի հիման վրա

* Տվյալների ոչ բավարար որակի հետ կապված՝ Բելառուսի ԳԱՇ մասնակցության համաթիվը չի ներկայացվում:

ռանքները և Հայաստանում արտադրված այն ապրանքները, որոնք հետագայում ԵԱՏՄ երկրներից արտահանվում են այլ երկրներ:

Ամփոփելով նշենք, որ գլոբալ արժեքի շղթաներին ներգրավման ամենաբարձր մակարդակն ունեն փոքր բաց տնտեսություն ունեցող զարգացած երկրները, որոնք արտահանման համար արտադրանք թողարկելիս մեծապես հենվում են հումքի և միջանկյալ արտադրանքի մատակարարման միջազգային ցանցերի վրա: Հայաստանի ինտեգրումը գլոբալ արժեքի շղթաներին իրականացվում է հիմնականում ուղղակի կապերի միջոցով՝ արտահանելով հումք և առաջնային ապրանքներ, որոնք օգտագործվում են գլոբալ շղթաներում և որի դեպքում ԳԱՇ մասնակցությունից օգուտները հարաբերականորեն փոքր են:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. China Coronavirus Lockdown Crippling Global Supply Chain, February 06, 2020, https://www.voanews.com/science-health/coronavirus-outbreak/china-coronavirus-lockdown-crippling-global-supply-chain
2. Post-COVID-19 Reconfiguration of the Global Value Chains and China, Jun 10, 2020, http://voxchina.org/show-3-182.html
3. Рогатных Е., Глобальные цепочки добавленной стоимости и их влияние наразвитие национальной экономики, 2016, https://mirec.mgimo.ru/upload/ckeditor/files/mirec-2016-4-rogatnykh.pdf
4. Ignatenko A., Raei F., Mircheva B., Global Value Chains: What are the Benefits and Why Do Countries Participate? IMF working paper, 2019.
5. Babych Y., Keshelava D., Mzhavanadze G., It's Not Who You Trade With – It's Who You Produce With: Measuring Georgia's Integration into Global and Regional Value Chains, 17 March 2020, https://iset-pi.ge/index.php/en/iset-economist-blog-2/entry/it-s-not-who-you-trade-with-it-s-who-you-produce-with-measuring-georgia-s-integration-into-global-and-regional-value-chains
6. https://worldmrio.com

Шушан МОВСИСЯН
Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ

АРМЕНИЯ И МИР

ГЛОБАЛЬНЫЕ ЦЕПОЧКИ СТОИМОСТИ И АРМЕНИЯ

Глобальные цепочки добавленной стоимости являются относительно новой формой международного экономического сотрудничества, которые возникли в результате углубления международного разделения труда и обусловлены повышением уровня эффективности производства. Развитые страны лучше интегрированы в глобальные цепочки ценности. Страны-экспортеры первичных товаров имеют большую долю прямых связей. Товары, экспортируемые из этих стран, используются в производстве других стран и экспортируются в третьи страны. Как страна-экспортер первичных товаров, Армения также имеет большую долю прямых связей.

Ключевые слова: *индекс участия в глобальных цепочках добавленной стоимости, прямые связи, обратные связи, Армения*

Shushan MOVSISYAN
Expert at «Amberd» Research Center, ASUE

ARMENIA AND WORLD

GLOBAL VALUE CHAINS AND ARMENIA

Global value chains are a relatively new form of international economic cooperation. They have developed as a result of deepening international labor division and were driven by the need to increase production efficiency. Developed countries are well integrated into global value chains. At the same time, commodity exporter countries tend to have more forward linkages, that is intermediate inputs exported from these countries later are exported to third countries. As a commodity exporter, Armenia has a large share of forward linkages.

Keywords: *global value chains participation index, forward linkages, backward linkages, armenia*